

## ՀԱՅԲ ՓՈՒԹԵՐԱՅ

1820 տարւոյ գարնան՝ վենետոյ Սուրբ Դազար կղզւոյ վանաց հմուտ Մխիթարեանն՝ Հ. Մինաս Բժշկեանց, ուսումնական ճանապարհորդութիւն մ'ըրաւ ղէպ ի Լեհաստան : 1830ին ի լոյս հանեց «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին» : Փորոց նպատակն էր, պատմական աղբիւրներով և անմիջական զննութեամբ ուսումնասիրել հայազգի գաղթականաց անցեալ և ներկայ պատմութիւնն ու ժողովրդական բարքը, որոնք արդէն ՃԱ դառն ի վեր Անույ կործանման քիչ վերջ հետզհետէ հոս գաղթեցին և հրաբարբ բնուծուեցան : Նա կ'ուզէր հայկական ցեղին այս ճիւղը քննել իւր ընդդիմադիր կառուցութեան և ազգային զգացման տեսակետով : Կ'ուզէր նա ինքզինքը համոզել, թէ իւր ազգը, որ իւր՝ արեւմտեան յառաջդիմութիւնը յԱսիա տանողի պաշտօնը՝ պատուաբեր կերպով կատարած էր, ունենայ զոսացուցիչ արիւնքութիւն և գորութիւն, ծովածուփ ալեաց հոսանքին հակառակ ընթացող ուղղութեամբ մը՝ կասր մը Արեւելք յԱրեւմտոս բերելու, և միանգամայն հոն՝ իւր յատուկ ազգային ցեղը երկար զարեւր բովանդակ իւր արեւելեան թարմ գունով պահպանելու :

Հ. Մինաս Բժշկեանց, որ իւր անունը ինքնայոժար՝ ի ներդաշնակ և ի պանծալին *De Medicis* թարգմանեց, ուշադիր և իմաստուն ճանապարհորդ մ'է : Նա կը խօսի պրքեալու և ձեռագրաց վրայ. կ'ըջանալացնէ տեղեկացնելով զմեզ Լեւոնդեկի մէջ հին սպուած հայերէն սաղմոսներու և բժշկական երկերու. կը լուսաբանէ կիսաւեր գերեզմանաքարերու և յիշատակագրերու արձանագրութիւնները. կը կարգաւորէ թուականները՝ և պատմական եղելութիւնները՝ համառօտ պատմական ուրուագծի մը կը վերածէ : Սակայն երբ կը գտնուայ այն ժամանակի վիճակը և Հայոց

ժողովրդական բարքը նկարագրելու, հոն կ'ըլլայ միտման, բաղադրուի և գրեթէ ձանձրանալի : Միայն հարեւանցի ծանօթութիւն մը կու տայ, թէ այժմ ի Լեւոնդեկ գրեթէ հարիւր ընտանիք կը գտնուին, որոնք ղեռ մեծաւ մասամբ գիւղի մէջ կը բնակին. և հարկ կը համարի պարզապէս ծանուցանել՝ որ Լեւոնդեկի Հայ կուսանաց մենաստանին մէջ աղօթքները «պեռ» հայ լեզուով կը կատարուին :

Գիտնական Հայրն գրեթէ 150 տարի ետքը հասած է : Վասն զի եթէ ճանապարհորդ մ'եղած ըլլար ղէպ ի արեւելեան կալիքիս ծէշ դարու երկրորդ կիսուն, օրինակի համար Հ. Լուիճի Բիլլուի հետ միասին, որ հոս երկար տարիներ աշխատեցաւ Հոլմանդ հետ միութեան համար, իբրեւ ամբիփակ խումբ մը պիտի գտնար ղեռ Հայերը : Այն ասին ղեռ կը գործածէին անոնք բոլորովին իրենց յատուկ լեզուն, ունէին սեպհական դասարան և օրէնքներ, զօրաւոր և կարող էին մեծաւ մեծ ստացուածովք, բազմաթիւ արտաւուծութեամբք և առաւելութեամբք, զորս՝ խոհեմութեամբ և ճարտար կերպով շարժելով՝ Լեհացի թափաւորներէն և աւելութեան մեծերէն կրցան ընդունել՝ քաղաքային վարչութեան յաճախ ստուտիկ հակառակելովն հանգերն : Իբր տէր բովանդակ լեհացի արեւելեան վաճառականութեան, իբր մեծ վաճառաբեր և վաճառական ժողովուրդ, Արեւելքի հետ գործունեայ յարաբերութեան մէջ էր, և հիւսիսային արեւմտեան Եւրոպիոյ մէջ, Ամսդէլի փականց վրայ՝ կարեւոր վաճառականական գաղթականութիւն մը հաստատեւ էր, և այսու՝ մասամբ մը աշխարհաքաղաքացի էին : Սակայն միանգամայն սերտիւ միացեալ էին լեհ տարեր հետ քաղաքացիութեան նպատօնց հաղորդակցութեամբ և քաղաքական յարաբերութեամբք, որոց պատճառաւ՝ իրենց տարեւաւոր ժողովրդական անտեսութեան մարմնայն իբրեւ ամենազգայուն անդամ, միշտ առաջին և ամենազգարտու համարուեցաւ :

Անույ մայրաքաղաքին կործանումը ի ձեռն Սիւլուզեան Սիւլ Սըպլան Սյուլմանին 1663ին, առաւին մղումը տուաւ խուռնամբոյ գաղթականութեան Հայ հայրենիքէն դուրս :

իսկ թէ 1483 ին Լէմպէրկի մէջ փայտաշէն եկեղեցի մը կը կանգնեն, ինչպէս Ռժշկեան կը պատմէ, իրիստ երկրպայական է. արժաւնահաւատ կ'երեւի այն ծանօթութիւնը, թէ Ռուսիէն իշխանն Լեւոն՝ քաղցին հիմնարկութեան ժամանակ, հիստալային մասը իրենց բնակութիւնն սահմանեց։ 1456 ին երաշխաւորուեցաւ իրենց Քաղիմիր մեծ թագաւորէն՝ յատուկ իրաւունք մը՝ Մակոտպարկցւոց իրաւանց ներմուծմամբն։ 1467 ին ալ թոյլ տրուեցաւ ազատութիւն կրօնական պաշտամանց, ի ներքոյ գերագահութեան Գրիգոր Հայոց եպիսկոպոսին։ Որչափ անոնք միշտ յարաբերութեան մէջ մնացին մայր հայրենեաց հետ, նոյնչափ սուսա Հայաստան միշտ յետմնաց խռմբեր է. երկար ժամանակամիջոցի մէջ՝ նաեւ ամենամեծ զաղթականութիւն մը, ինչպէս այն՝ որ ժն դարու սկզբան, թէպէտ մէ ի մայր հայրենեաց, այլ սիրելի միջին կայարանէ մը՝ ի Վալաքիոյ անմիջական ծագումն առաւ։

«Հին իրաւունք Հայոց ի Լեմպէրկ» 1519 ին լատիներէն թարգմանութեան մը վրայ հիմնուած՝ հաստատուեցաւ Սիկիզմոն Ս. Թաղաւորէն։ Պատմական իրաւագիտութեան տեսակետով ոչինչ՝ սակայն մեծ նշանակութիւն ունի յատկադիմութեան պատմութեան մէջ։ Սուսաց հաստատուն կարգաւորութեան յառաջ կը բերէ հին կտակարանի եւ քրիստոնէական տարրեր, ի մասնաւորի Հայ եւ առ հասարակ եւրոպական տեսութիւններ, քաղաքական եւ եղեոնագիտական վճիռներ՝ որը ոչ ըստ բաւականի իրարու հետ կցորդուած են։ Հայ ժողովրդեան կենաց վաճառականական կամ բուն դրամական գլխաւոր կանոն նշանակուած է մեծապէս՝ Հայոց Յովհաննէս Թաղաւորին հաստատուն կիրառի աւուր հանգստեան եւ սրբութեան վրայ օրինաց առաջին գլուխը։ Պատիւներն սահմանուեցան դաշտաց փառաւելուն՝ միաւորուած եղան մը կամ գոյցուած հորթի մը համար, ընդհանրապէս արժէքին հարմարատ։ Բայց երբ Հայ մը, ընտանեաց անդամ մի սպաննէ, աւելի քան զարժանն պիտի տայ, թէպէտ մարդկային արիւնը անգին է, եւ որ եւ տուգանք, ճշմարիտը խօսելով, բարոյական համարելի չէ այդ մասին,

այնու հանդերձ պիտի վճարէր նա 365 ոսկի ֆիորին, եւ ճիշտ «բանաւոր պատճառաւ»։ Որովհետեւ մարդու մարմինը 365 յոգեր ունի եւ տարին՝ նոյնքան օրեր։ սակայն այսպիսի «տարօրինակ խիստ» պատժադրութիւն մը եղած է մարդկային կենաց ապահովութիւնը պահպանելու համար. մարդասպանութեան համեմատ՝ ի մէջ Հայոց եւ «քրիստոնէից» մը կը զօրէին ընդհակառակն ընդհանուր օրէնքներ։

Ի Հուց (պատարան), որ կը գտնուէր Լեմպէրկի արքեպիսկոպոսական պալատին մէջ, կը ժողովուէին երկրտառան, առաւելապէս կենօք չափ ընտրեալ դատաւորներ, իրենց նախագահին հետ. փոքրագոյն նոյն աւաններու մէջ, ուր անսարսկոյս նոյն օրէնքը կը զօրէին, բաւական կ'ըլլային վեց, կամ ինչպէս ի Եպիսկոպիկ, միայն չորս հոգի։ Հայ դատարանները տեսեցին մինչեւ ժժ դար, 1736 ին միւս ամենայն արտօնութեանց հետ վերստին հաստատուեցան, սակայն 1784 ին ի Լեմպէրկ վերջնականապէս լուծուեցան եւ իրենց օրինակները տրուեցան տէրութեան դատարանին։

Իսկ Վլատիլա Եպիսկոպիկ ժամանակ Լեմպէրկի մէջ տրուեցաւ Հայոց յատուկ թաղ մը, քաղցին կեդրոնին մօտ։ Աստի դուրս կ'երևէին մեծ, լաւ կազմուած եւ լաւ գինուած կարաւաններ Արեւելք երթալու համար, կարաւան-բաշայի առաջնորդութեան ներքեւ, որ էր հզօրագոյն եւ խոհմ մարդ մը, եւ այս վտանգալից վաճառականութիւնը իբր արուեստ կը կատարէր։ Աստի կը գառնային տուն՝ Արեւելից ամենայն մեծապայծառ եւ շքեղափայլ, երկիրերանց պերճութեամբը ճոխապէս ընծաւարեալ։ հոն կ'ընտանային փերեղակութեամբ երկնակապոյտ անթաւառ թաւիշներ, կանանչ դամակեան կերպաններ, ըստորագոյն ոսկեհիւս փրպակներ, մետաքսայ գեղանկար մուքատիմ-գօտներ, տանձական շաւեր ու սեւեր եւ այծենի մորթեր — եւ այս ամէնը նոր եւ փայլուն, արեւելեան երանգոց եւ բուրմանց յատուկ քաղցր հոտով։ Զարմանք չէ, որ նոր հասած հայ փարաւան մը՝ Լեմպէրկի ազնուական տիկնայց համար քաղաքային դէպք մի եւ զործ կը համարուէր,

ինչպիսիք քաղաքացեաց համար ելեամտական շտեմարան մը : Այս՝ պատճառ մի աւելի կրնար ըլլալ Հայոց գեմ չարակամութեան, որոց վրայ արդէն ռամիկը երկար ժամանակէ ի վեր ծուռ աչքով կը նայէր : Վառնի գի Հայք թագաւորին և կառավարութեան առջեւ պատիւ և յարգ ունէին, զոր գիտցան զործածել իրենց նպատակաւ արտօնութիւններ հայթհայթելու, և շատ խնդիրներու մէջ՝ (զորս ունեցան ի նմալերի քաղաքապետութեան հետ), նոյն իսկ ի նպատակ իրենց վճիռներ կորցելու : 1505ին ձեռք բերին նաեւ լիովին ազատութիւն ի մաքսէ ոչ միայն արեւելեան, այլ նաեւ ի ինքուանիոյ, Բերսիւնի և Շէլզիոյ վաճառուց համար : Այժմ կը գտնուին հայ արուեստաւորաց ժողովատեղիներու մէջ արեւելից գանձերու քով նաեւ բրուսիական սաթ, հունգարական դանակներու և գերմանական քով վենետիկեան սակերական զործեր : Այնչափ աւելի կարեւոր անյոյժ մեղան Հայք ընկերական կազմակերպութեան մէջ, որչափ աւելի, շնորհիւ իրենց ճարտար կենցաղավարութեան և քաղաքան լեզուազիտութեան, ունեցան գերազանց կերպով ամենայն պահանջուած յատկութիւնները իբր թարգման, զործակատար, վաճառարկու, միջնորդ և « գործակալ » : 1538էն ի վեր, ի նմալերի քաղքէն վարձեցին նաեւ իրօք պաշտօնական թարգմանի եկամուտը : պաշտօն մը, զոր իրենք կրցան տարածել մինչեւ ամենայն օտար վաճառողաց և շահակցաց համար շահարեք և բնդհանուր պաշտօնական միջնորդութեան զօրծոյն վրայ : Շատ անգամ ալ կրթեալ Հայեր թագաւորական մեծ դեսպանին ընկերացան յԱրեւելոյ հրեշտակութեանց մէջ : երբեմն նոյն իսկ անոր տեղը բռնեցին : Զձ գարու մէջ իրենց ընկերական և վաճառականական մեծ զարգացումը մղեց յաճախ ի նմալերի ռամիկ ժողովուրդը՝ բողոքելու և Հայոց իրաւանց և արտօնութեանց ամփոփումը ու-

զելու : Առժամանակեայ արգելումն արտաքսի վաճառարեւութեան 1563ին Սիկիւմանտ Օգոստոս թագաւորէն վերստին վերցուցաւ, բայց 1577ին վաճառատեղեաց թիւը՝ 22 հարուստ և 19 աղքատ և 1600 իրենց տուները, որոց ոչ մին կրկիսի վրայ կրնար ըլլալ, 79 բաժին որոշուեցաւ : չունէին բնաւ զարեշուր պատրաստելու իրաւունք, և կըրնային ունենալ միայն երկու զինեաւուն, երեք մեղրաբոյ խանութ և չորս՝ զարեշուր : և ոչ ալ կրնային, ինչպէս երբեմն, վերոյիշեալ դատուց մէջ ընդունուի աւելի քան երկու հայազգի կոշկակար, երկու զերձակ և երկու մուշտակազործ ու մէկ նկարիչ :

Յաջորդ տասը տարիներու շրջանին մէջ ի նմալերիցի Հայոց այս տեղադրութիւնը երկու արձանագրելի դէպք ունի, որոնք « Գրիստոնէից » և Հայոց ազգի մէջ եղած բուռն հակառակութիւնը մեծապէս մեղմացուցին : Առաջինն է իրենց ի հռովմէական — ուղղափառ եկեղեցին մտնելն, զոր՝ Նիկիոյայոս Թորոսովի՝ որ 1627ին ի ի նմալերի եպիսկոպոս օծուեցաւ և 1635ին ի Հոռով արքեպիսկոպոս, 1667ին վերջնականապէս յարանաւութեամբ ի գլուխ հանեց, թէպէտ շատ ընդդիմութիւն կրեց և ի պատրիարքէն իրեն վրայ նշուրջ դրուեցաւ : — Երկրորդ շարժումին եղաւ հայրենասէր բնաւորութիւն Հայոց՝ 1648ին ի նմալերի Պոհտան Փմիւնիցքի ձեռքով պաշարման ժամանակ : Եւ 1653ին տասը ընդարձակ տուններու ստացումը, նոյն իսկ կըրնին վրայ, և երեք նոր վաճառանոցներ և մանրավաճառութիւն շնորհուեցան իրենց, որք իրենց յառաջագոյն, միայն պատերազմի ժամանակին համար պատահաբէ ի պատահար թոյլ տրուեց էին, բայց զեռ տարակուսական է, թէ արեւօք ստացան են լիապէս և բովանդակ այս նոր իրաւունքը :

Շարայարեքի

